նուս և խաղաղասոյց զայն 'ի ծոմն Կարմիր, և եղեալ 'ի նմա զօրս արձակեաց 'ի Մէտինէ քաղաք, զի բերեալ հանցեն 'ի գերեզմանէ զոսկերս մարգարէի նոցին՝ տանել յաշխարհն իւրեանց, չյաճախել այլ եւս անդ ուխտաւորացն Արաբացւոց։ Իբրեւ լուաւ զայս Սալահատտին՝ որ էր յայնժամ 'ի կողմանս Խառանայ, ազգ արար իշխանին Եգիպտոսի, և նա առաքեաց զկնի նոցա զՀիսամէտտին զօրօք, որոց խառնեցան խումբք Արաբացւոց, և հասեալ մերձ 'ի Մէտինէ՝ ձեռբակալ արարին 'ի նոցանէ զարս 10։ և տարեալ 'ի Գահիրէ եւուն կոտորել զնոսա դասուց դիանաւորաց։

Եւ մինչդեռ քրիստոնեայք եւ այլազգիք տագնապէին 'ի սոյն վիճակ տաժանելի, Սուլթանն Իկոնիոյ, Գլիճ Արսլան 'ի Սելճուգեան մնացորդաց, արշաւեաց 'ի սահմանս տէրութեան Սուլթանին 'ի գրաւել զբերդն Թասան։ Սալահատտին բարկացաւ յոյժ, զի համարձակեցաւ աղարտել զկարգ օրինացն Իսլամայ։ ուստի 'ի վանել զնոր թշնամիս զայս եթող զպատերազմն քրիստոնէից, որ ուխտ եղեալ էր անձին իւրում վանման առնել նոցա։ Առաքեաց զզօրավարն Թոդի էտտին 1000 արամբք, որոյ պատահեալ 20,000 զօրաց Գլիճ Արսլանայ, ցրուեաց զնոսա, և նոցա թողեալ զամրոցն Հէ-ն մեկնեցան 'ի տեղի իւրեանց եւ խնդրեցին հաշտութիւն։ Սալահատտին ոչ կամեցաւ նեղել զԺողովուրդն, որք նեղեալ էին յերեսաց ասստուածեան սովուն։ վասն որոյ առաջի արար Իսլամաց և Քրիստոնէից և ամենայն մերձակայ թագաւորաց ընդհանուր հաշտութիւն։ Ժողովեցան առ նա դեսպանք յամենայն կողմանց, ընդ որս և դեսպանն Բալտուինի, եւ եղեալ դաշինս՝ արարին խաղաղութիւն։

Սալահատտին, որ տածէր 'ի սրտի իւրում զսէր աշխարհակալութեան, արդիւնաւորեաց զայն յասիական եւ յարաբական պատերազմունս, և վայելեցոյց զհամբաւ մեծութեան իւրոյ առաջի աշխարհի։ զանգործ աղքատս և զկարօտեալս Սուրիոյ տարաւ ընդ իւր յԵգիպտոս և հանգոյց զնոսա խնամօք, որով եղեւ երախտաւոր եւ բարերար հասարակաց։ Եւ ապա ձեռն արկ կատարել զբարեգործական չինուածն զոր սկսեալն էր յառաջագոյն։